


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀՄԻ ԳՈՅԱԿԱՆ ԿՈԶԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ТРУДЫ ВИНОГРАДНО-ВИНОДЕЛЬЧЕСКОЙ ЗОН. СТАНЦИИ ССРА
Annales de la Station oenologique d'Arménie (SSRA)

Գյուղա-մասնայիկան պետքանի

Պահակ 4

Պ. ՀԱՏՎՈՐՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ԵՏԵԼ
ԽԱՂՈՂԻ ԱՅգին



634
Շ-36

ԵՏԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵԿ ՆՐԱ ՆՊԱՏԱԿԸ

Մեր աշխատավորության սննդի դործում խոշոր տեղ ե բռնում այգեգործության արտադրանքը:

Աշխատավորությանը միշտ անհրաժեշտ քանակով խաղողով և նրանից պատրաստված բաղմատեսակ քաղցրավենիքներով ու մննդարար հյութերով ապահովելը հանդիսացել է և մնում և մեր այգեգործական խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունների հիմնական ինդիքտը: Այդ նշանակում ե, վոր մեր սոցիալիստական տնտեսությունները չեն կարող մեկ տարի արտադրել շատ բերք, իսկ մյուս տարին՝ բիչ ամեն տարի արտադրել վօրակով և շատ բերք, անընդհատ բարձրացնել բերքատվությունը —ահա այն կարենը հարցը, վոր այսոր իր սրությամբ գրվում ե այգեգործական խորհրդատեսությունների և կոլտնտեսությունների առաջ:

Այգովիսի մի խիստ կարենը ինդիքտ կարելի լի լուծել մի շարք անհրաժեշտ ագրոմենտարկումների կիրառման հետ միասին այգիները վօրակով, ճիշտ ժամանակին և պահանջված ձևով ետելու միջոցով:

Խաղողի այգու ետն այգեգործի ձեռքում մի այնպիսի հիմնական աղբուածենիկական միջոց ե, վորի չնորհիվ այգեգործը կարողանում է կանոնավորել վոչ միայն այգու տարվա բերքը և վաղերի նորմալ գարզացումը, այլև ապահովում և նրա լավ աճը և վօրակով ու բարձր բերքը հոջորդ տարվա համար: Այսուղից պարզ է դառնում այդին ետելու հսկայքաման նշանակությունը և այդ դործը վօրակով կատարելու անհրաժեշտությունը:



38123-62



Ինչու պետք ե խաղողի այգին ետել, չե՞ վոր խաղողի վազը վայրի վիճակում աճում և բերք ե տալիս առանց ետելու:

Բանն այն ե, վոր խաղողի վազն իր կենսական մի շարք հատկություններով տարբերվում է գյուղատնտեսական շատ կուլտուրաներից, ճիշտ ե, նա վայրի վիճակում առանց ետելու աճում և բերք ե տալիս, բայց մեզ համար մինույն չե, թե խաղողի այգին յերբ, ինչ քանակով և վորակով ե բերք տալիս:

Խաղողենին վայրի վիճակում աճում ե գետերի հովտներում, անտառներում և այլն: Նա ունի իր բազմաթիվ տեսակները, վորոնք մեծ մասամբ փաթաթվող կամ վերմազլցող բույսեր են և բնական պայմաններում ունեն ուժեղ աճեցողություն: Վայրի վիճակում, յերբ նրանց չեն ետում, նրանք տալիս են բազմաթիվ ծյուղավորություններ, կազմում են հակայական սաղարթ, մինչդեռ բերքը լինում ե քիչ և անվորակ: Վողկույզները շատ ցանցառ են, պտուղները (գիլաները) կորիզով հարուստ են, հյութով աղքատ, թթու և ուտելու համար միանգամայն անպետք:

Ի՞նչով ե բացարկում այդ. նրանով, վոր նա չի մը շակվում մարդու կողմից, ամեն տարի չի ետվում, հողը չի փորփում, չի պարարտացվում և այլն: Ետք խաղողենու վրա կատարվող աշխատանքի այն առաջին ձեռնարկումն ե, վորը նրան հանում ե վայրի վիճակից ու նրա զարգացումը դնում մեզ համար նպատակահարմար ուղու վրա: Ահա թե ինչու այգին ետելն այնքան կարևոր նշանակություն ունի:

ԵՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Խաղողի այգու ետը լինում ե յերկու տեսակ. մեկը, վորը կատարվում ե վազի կանաչ ժամանակ, կոչվում է կանաչ կամ տմտուային ետ, մյուսը՝ վազի հանգստի ընթացքում, կոչվում է ձմեռային կամ չոր ետ:

Այդ յերկու գործողություններն ել սերտորեն կապված են իրար հետ և լրացնում են միմյանց: Կանաչ ետը միաժամանակ ուղղում է չոր ետի ժամանակ թույլ արբած սխալները:

Կանաչ ետը, վոր կոչվում ե նաև կանաչ հատումներ, կատարվում ե վազի աճեցողության ակտիվ շրջանում: Կանաչ հատումների մեջ մտնում են մի շարք գործողություններ, ինչպես՝ բջատում, ծերատում, բնամատերի հեռացնելը և շատումը, տերեներ կտրելը և այլն: Այս աշխատանքին ժողովրդական լեզվով ասում են սուդը տալ, թեև սուդը տալիս այդքան լայն գործողություններ չեն կատարում, այլ գլխավորապես հեռացնում են արմաներից գույք յեկած շվերը, բնամատերը և ավելորդ շվերը, կտրվում են չոր ետից հետո մնացած չորուկները և այլն:

Չոր կամ ձմեռային ետը մեզ մոտ կատարվում ե գարնանը՝ այդեքացից հետո, իսկ այն յերկրներում, ուր ձըմեռը տաք ե, ցրտահարման վտանգ չկա և այդիները չեն թաղում, չոր ետը կատարվում ե աշնան տերենաթափից ոկսած մինչև գարուն՝ բողբոջների բացվելը, հենց այն ժամանակաշրջանում, յերբ վազերի բոլոր մասերը փայտացած են, նրանց մեջ դանդաղել են կենսական պրոցեսները և վազերը գտնվում են «հանգստի շրջանում»:

Չոր ետի ժամանակ այգեգործը հաշվի յե առնում վազի հետեւյալ մասերը: —

1. վազի թերթը և յենթաթերթը.

2. յերկամյա մատերը.

3. միաժամյա մատերը, դրանց քանակը.

4. մատերի վրա թողնվելիք աչքերի քանակը.

5. վազի ձևավորման սխալնեմը և այլն:

Ահա դրանք են հանդիսանում չոր ետի առըրերը կամ որյեկտները:

Ինչպես ասացինք, ետի ժամանակ գործ ունենք վազի թերթի մատերը և սրանց վրա գտնվող աչքերի հետ:

Վերջին հաշվով ետք մի գործողություն է, վորով պայմանավորվում եւ վազի վրա թողնվող աշքերի քանակը:


Աշքերն ունեն չափազանց բարդ կազմություն. այստեղ սաղմային վիճակում գտնվում են ապագա շիլը և բերքը: Վազի նորմալ կյանքը, բերքի քանակը, բերքի վորակը, ինչպես և շիլը աճումն ու զարգացումը, բոլոր անհրաժեշտ պայմաններից զատ, կախում ունեն թողնված աշքերի քանակից: Միևնույն պայմաններում վորքան շատ են վազի վրա յեղած աշքերը, այնքան նրանցից դուրս յեկած շիլը թույլ կլինեն, բայց միաժամանակ վագն ամբողջությամբ վերցրած տվելի փարթամ կլինի, կտու առատ, բայց չաձրորակ բերք: Յեվ ընդհակառակը, վորքան քիչ լինեն աշքերը, այնքան նրանցից դուրս յեկած շիլը լավ կղարգանան, ուժեղ կլինեն, կկուտակեն ավելի շատ սընունդ և մենք, ճիշտ ե, մի քիչ պակաս, բայց բարձրորակ բերք կստանանք:

Սյս լինդիներն ետքորից պահոնջում են ծայրառադանի զգուշություն: Նա պետք է լով ճանաչի վազը, իմանա նրա զարգացման ուժը և այն ըստայնմ ծանրաբեռնի: Վազի ծանրաբեռնվածությունը չպետք ե հասկանալ բացարձակ իւստառվ, թե վորքան աշքեր են թողնված նրա վրա, այլ վազի աճման ուժի և բերքի քանակի հարաբերությամբ: 3—4 կտ բերքը մեկ վազի համար կարող ե ծանրաբեռնություն լինել, յեթե նա թույլ աճեցողություն ունի, իսկ 18—20 կտ բերքը մեկ ուժից վազի համար՝ քիչ լինել: Անա թե ինչու պեսք ե լավ ուսումնասիրել վազը, իմանալ նրա ուժը և ապա վորոշել նրա վրա թողնվող թեփերի, մատերի և յուրաքանչյուր մատի աշքերի քանակը:

Իսկ թողնված աշքերի քանակով ել վորոշում ե ետքակը թողնված աշքերի քանակի համաձայն ետք լինում ե յերեք տեսակ՝ յերկար, կարճ և խառն: Յերկար ետք գեղքում մատերի վրա թողնվում ե 5-ից ավելի՝ 7—8,

յերեն՝ 10—12 աչք: Այդպիսի ետ կատարում են խոնավ շրջաններում, պարալիս հողերում, վորտեղ վագերի աճեցողությունն ուժեղ եւ և համապատասխան քանակով բերք ստանալու համար հարկավոր ե յերկար ետել, հակառակ դեպքում շիլը կհուանան և բերք չեն տա: Յերկար են ետում նաև ուժեղ աճեցողությունն ունեցող փոփոխակները, ինչպես մեզ մոտ հաշաբաշը, ամբարին, ալաբակին և այլն, վորոնք ի վիճակի յեն ավելի շատ ծանրաբեռնվելու:

Կարճ ետն այն ե, յերբ մատերի վրա թողնում են 2—3—4 աչք: Կարճ ետ կատարում են չոր շրջաններում, մնադարար նյութերով աղքատ հողերում և թույլ աճեցողություն ունեկցող փոփոխակների նկատմամբ: Կարճ ետ և կատարվում բաժակ կոչված սիստեմի ժամանակ, հով-



Նկ. 1. Յերկար ետ (Մեդովի սիստեմ)



Նկ. 2. Կարճ ետ (բաժակի սիստեմ)

հարի դեպքում և մասամբ մեր տեղական թմբային սիստեմի այգիներում:

Խոսն ետ համարվում ե այն ետը, յերբ նույն վազի վրա մատերից մի քանին ետվում են կարճ, մյոււները՝ յերկար: Այսպես, որինակ, Գյույցոյի սիստեմի գեղքում թեփի վրա թողնում են յերկու մատ, վորոնցից մեկն ետում են յերկար 8—12 աշքի վրա, վորպես բերքատու, իսկ մյոււնը կարճ՝ յերկու աշքի վրա, վորպես փոփարինոց: Խոսն ետ կարելի յերկու աշքի վրա, վորպես փոփարինոց:

ինչպես ամեն աշխատանք, այնպես ել խաղողի այգու ետն ունի իր վորոշ որենքներն ու սկզբունքները, հետևաբար առանց վերջիններիս ճիշտ յուրացմանը չպետք է հանձն առնել այդ աշխատանքը։ Յուրաքանչյուր ետք ետի մասին պետք ել իմանա հետեւյալը։

1. վազի վրայի բոլոր մատերը բերքատու չեն, բերքատու յեն միայն յերկամյա մատի վրա գտնվող մեկ տարեկան մատերը։ Բնի և թերի վրա քնած աչքերից դուրս յեկած մատերն ընդհանրապես բերքատու չեն։

2. յերկու մատերից նա յե ավելի ուժեղ և ավելի բերքատու, վորը նորմալ և աճում և նորմալ միջնանգույցներ ունի։ Նվազ և շատ բարակ մատերն ավելի քիչ բերքատու յեն։

3. բերքը գտնվում է միամյա մատի աչքերից դուրս յեկող շվերի վրա։ Միամյա մատերի վրայի բոլոր աչքերը միատեսակ բերքատու չեն։ ամենից շատ բերքատու յեն մատի հիմքին մոտ և բարձրադիր կոնում ունեցագ (ուռած) աչքերը։ Մատի հիմքին շատ մոտ գտնվող աչքերը բերքատու չեն։

4. մատերի թեքելը, կոացնելը, հորիզոնական դիրք տալը և ընդհանրապես մատի ուղղանայաց զարգացման ամեն մի խանգարում դժվարացնում է հյութերի աղատ շարժումը մատի մեջ, հետևաբար իջեցնում է նրա վեգետացիոն ուժը, նպաստելով բերքատվությանը. այդ և պահանջ, վոր մի շարք յերկրներում ետելուց հետո մատերին այս կամ այն ուղղությունն են տալիս (ահս նկ. 3—4)։

Մեր թմբային սիստեմում մատերը հատկապես չեն կոացնում, վոլորում, վորովնետե նրանք մեծ մասամբ ընականորեն հորիզոնական կամ կոացած դիրք ունեն։

5. միենույն պայմաններում ուժեղ աճեցողության այգին պետք է յերկար ետել, քան թույլ աճողները։

6. միենույն աճեցողությունն ունենալու համար, յերկու միատեսակ մատերից նա, վոր կոացած և կամ

պառկած, պետք ե ավելի կարճ ետել, իսկ նա, վոր ուղղահայաց դիրք ունի, պետք ե յերկար ետել։


7. վազն ետելով մենք նրա միա առաջացնում ենք բազմաթիվ վերքեր, վորոնք խանգարում են վազի նորմալ կամքը, խանգարում հյութատար անոթների աշխատանքը, թուլացնում վազի վեգետացիոն ուժը և կրծատում նրա կյանքի տևողությունը։ Ուստի անհրաժեշտ և ետելիս այդ վերքերի մասին իմանալ հետեւյալը։

ա) առաջացրած վերքերի թիվը, վորքան հսարավոր ե, պետք ե քիչ լինի, մահավանդ բնի և բազմամյա մատերի վրա։

բ) վերքերը պետք ել լինեն փոքր, կտրվածքը հարթ և մաքուր, առանց ձեղքվածքների և գուրս ցցված կոճղերի, վորոնք սնկային հիվանդությունների զարգացման համար նպաստավոր պայմաններ են հանդիսանում։

գ) միամյա մատն ետելիս պետք ե կտրել (կախիթի սիստեմ) միջնանգույցից, վերջին աչքից 3—4 սանտիմետր վերև և այդ աչքին հակառակ կողմի վրա։ Վորմանք առաջարկում են ետել, այսպես կոչված, Դեղեմերի սիստեմով, ըստ վորի պետք ե կտրել մատի վրա թողնվող վերջին աչքից մեկ միջնանգույցին տարածությամբ


նկ. 3. Մատն ազեղանձնական կոացած և աչքին հակառակ կողմի վրա։ Վորմանք առաջարկում են ետել, այսպես կոչված, Դեղեմերի սիստեմով, ըստ վորի պետք ե կտրել մատի վրա թողնվող վերջին աչքից մեկ միջնանգույցին տարածությամբ այսպիսի կողմանակից մարդիկ պատճառաբանում են, թե այդ դեպքում հանգույցի կտրվածքի վրա մնում է դիմա-



բագման, վարք պաշտպանում եւ մատի ծայրը փողելոց և հիգանդությանների վարակի աղբյուր դառնալուց:

Սակայն այս սխառեմը գործնական չի, և առանձին ոպուտ շտալով, զցում եւ աշխատանքի արտադրողականությունը, հետեւար այդ սխառեմը չպետք եւ լնդունել և ևոր պետք եւ կատարել այնպես, ինչպես ընդունված եւ մեր պրակտիկայում:

Դեղիմերի սխառեմը կարելի յեւ կիրառել բացառապես այն դեպում, յերբ սւննը այնպիսի փոփոխակ, վորի հանգայցները շատ մոտ են և միջնանգույցից կորելով վերքն աշքին շատ մոտ կլինի և աշքը դրանից հեշտությունը կարող եւ փշանաք, և մեկն ել յերիտասարդ վաղերն ետևում դեպում:



Նկ. 5. Դեղիմերի սխառեմ

Մատի թեր կտրել թեր դիրքով, աշխատելով թերաթյունն անել թողած վերջի աշքի հակառակ կողմում և դեպի հողը, վորպեսող լոցի ժամանուկ հասած ջրերը ուղղակի թափնեն ցած և վոչ թե հոսեն աշքերի վրա ու լվասեն նրանց: Աւատի անհրաժեշտ եւ աշխատել այնպես ետել, վոր մատի վրա թողնվող վերջին աշքը հնարավորության սահմանում դեպի ցած ուղղված լինի:

Մատի թեր կտրելը միաժամանակ հեշտացնում և արտգացնում եւ աշխատանքը, վարովնուն թեր ուղղությամբ փալտի դիմադրող ուժը փարբանում եւ:

ե) ետելու գործիքները պետք եւ լինեն լավ սրված, յուղված և կանոնավոր դրության մեջ: Զյուղված, չսրված և զատ աշխատող դրություն դժվարությամբ եւ / կտրում մատը, թեր և այն, վորի հետեւանքով կոտրիւմ են թերը, ջարդվում մատերը, ծամծմվում կտրվածքները և առաջանութ ճեղքեր, դուրս ցցված կոճղեր և այլն, վո-

րոնց բացասական հետևանքների մասին արդեն հիշատակեցինք:

Ետելու ժամանակ չի կարելի բավարարվել միայն այգեղործական մկրատով, ինչպես հաճախ տնում են. ետելու պետք եւ ունենա նաև ձեռքի սուր սղոց՝ չորուկները և ավելորդ բազմամյա մասերը հեռացնելու համար:

զ) յեթե այզիները մշակում են լարերի կամ հենակների (ցցերի) վրա, ետելուց հետո միամյա մատերին պետք եւ տրվի վորոշ ուղղություն՝ տվյալ ձևավորման սխառեմին համապատասխան: Այսպես, յեթե Դյույոյի յերկար ետված մատը հորիզոնական դիրքով պառկեցնում և կապում են առաջին հարկ լարեց, Սիլվոդի ժամանակ մատերը կռացնում և յերկրորդ հարկ լարեց իջեցնում են առաջին հարկ լարի վրա ու կապում. Կախեթում պաղատու մատն աղեղնածի կապում են հենակից կամ վազից և այս:

Անա մոտավորապես ետի այն կանոնները, վոր պետք և խմանա յուրաքանչյուր ետվոր:

Ետելու ժամանակ ետվորը պետք եւ հեռացնի՝

1) բոլոր հիվանդու, կարկտահարված, այլ պատահարներից վնասված և չորացած մատերը, վորոնք խանգարում են խաղողնու նորմալ զարգացմանը.

2) արմատներից գուրս յեկած բոլոր արմատաշվերը և բնի ու թերերի վրա գուրս յեկած մատերը.

3) վազն ամբողջությամբ կամ նրա առանձին թերը թարմացնելու համար բնատում են վազը (կունդ անել), կամ կտրում են այս կամ այն թերը:

Ետը բարդ աշխատանք եւ նա պահանջում եւ մտածված վերաբերմունք գործին և առանձին կոնկրետ մոտեցում՝ յուրաքանչյուր վազին: Նա պետք եւ մտածի վոչ միայն շատ բերքի մասին, այլև բերքի բարձր վորակի, ինչպես և վազի նորմալ աճեցողության մասին: Յեկ վերջապես, նա պետք եւ զբաղվի նաև հաջորդ տարվա համար

առողջ և բերքատու մատեր ապահովելու հարցով։ Ուստի
նա պետք է լինի փորձված և հմտւ ետվոր։

ՎԱԶԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԻՍՏԵՄՆԵՐԸ

Խաղողի վաղի ձևավորման սիստեմները շատ շատ են. վորքան այգեգործական շրջան կա, անքան ել ձևավորման սիստեմներ գոյություն ունեն։ Այդ կախված ե տվյալ շրջանի հողային կլիմայական պայմաններից, տեղի աշխարհագրական դիրքից, հողի խոնավության ուժիմից, տվյալ փոփոխակի սեփական առանձնահատկություններից, այգեգործության զարգացման ուղղությունից և այլն։ Վազի ձևավորման սիստեմը լինում է պարզ և բարդ։ Դրանք իրարից տարբերվում են վազի վրա թողած թևերի և մատերի քանակով, դրանց յերկարությամբ, ուղղությամբ բնի մեծությամբ և նրա ուղղությամբ։

Պարզ սիստեմների գեպքում վազն ունենում է մեկ թև և նրա վրա մեկ կամ յերկու մատ։ Բարդ սիստեմների դեպքում, նայած պայմաններին, թևերի քանակը բնի վրա, ինչպես և մատերի քանակը թիվ վրա, շատ են լինում։

Մյուգեգործության մեջ հայտնի յեն Բուրգունդիայի, Մեդոկի, Գյույոյի, Ռուայի, Հովհարի և այլ բազմապիսի սիստեմներ, վորոնցից ամեն մեկը կիրառվում է այս կամ այն այգեգործական շրջանում։

Մեղ մոտ, Արարատյան դաշտում, տարածված ե տեղական «թմբային» կոչված սիստեմը, վորն անցյալում համապատասխանում եր մանր գյուղացիական տնտեսությանը։ Խորհրդայնացումից հետո, մասնավորապես վերջին տարիներում, մեր խորհրդային և կրթեկտիվ տնտեսություններում մեծ թափ ե ստացել նոր այգիների տնկման գործը, վորը տարվում է սոցիալիստական տնտեսության համապատասխանող շարքային ձեռվ, յերբ—թմբերի բացակայության և վաղերը կանոնավոր կերպով ձևավորելու

շնորհիվ, հնարավոր և դառնում աղբոտեինիկական մի շարք աշխատանքների մեջենայացումը, և, հետեաբար, արտադրողականության բարձրացումը։

Նոր տնկված այգիները ձևավորվում են այսպես, վորպեսզի հնարավոր լինի վազերը բարձրացնել լարերի վրա, ինչպես այդ կատարված ե խորհրդային Յ-ը տնտեսության վորոշ այգիներում։

Վերը նշված ձևավորման բոլոր սիստեմների վրա մանրաման կանգ առնելու հնարավորություն չունենալու պատճառով, համառոտակի կանգ առնենք նորատունկ այգու ետի և մեղ մոտ գոյություն ունեցող թմբային սիստեմի և լարերի վրա բարձրացվող սիստեմներից մեր այգեգործներին ծանոթ չունիար և Գյույո սիստեմների վրա։

ՆՈՐԱՏՈՒՆԿ ԱՅԳՈՒ ԵՏԸ

Նորատունկ այգու հիմնական աշխատանքն առաջին յերեք տարում վազի նախապատրաստումն ե՝ նրան այս կամ այն սիստեմով ձևավորելու համար։ Այդ շրջանում հիմնական ուշադրությունը պետք է դարձնել բնի կազմակերպման վրա։ Առաջին տարում կարոնը կամ արմատակալածները տնկելուց հետո ետում են յերկու աչքի վրա։ Հաջորդ գարնանը, վորն ետելու առաջին տարին և համարվում, վազերի վրա յեղած 2. ական մատերից վերևիները հենց հիմքից հեռացնում են, իսկ ներքեւի մատն ետում յերկու աչքի վրա։ Նույնին են անում նաև յերկրորդ տարում։

Յերկրորդ տարում ապահովում են տվյալ սիստեմի համար համապատասխան բարձրության բունք։ Դրա համար վերեկի մատը նկատվում է հիմքից հեռացնում են, իսկ ներ-

քեինն ետում այն հաշվով, վոր նախ ապահոված լինի բնի բարձրությունը և ապա դրանից բարձր 2—3 աչք լինի Այդ մատի բոլոր աչքերը, բացի վերևի 2—3 աչքից, վոշնչացնում են. թողած աչքերից դուրս յեկած մատերը հաջորդ տարում են՝ թերը ստանալու համար:

Վազի իսկական ձևավորումը կատարվում է տնկման յերրորդ կամ չորրորդ տարուց,
նայած թե ինչպիսի աճեցողության այդի ունենք: Հետագա տարիներում շարունակվում է ձևավորումը մինչև նրա վերջնական ավարտումը, կազմակերպելով այնքան թե, վորքան թույլ է տալիս տվյալ սիստեմը և վազի աճեցողությունը:

Նկ. 7. Վազի յերկրորդ տարվա ետք
ուշադրություն դարձնել: Այդ աշխատանքը պետք է հանձնել ավելի փորձված և հմուտ ետվորների: Առաջին տարիներում թույլ տրված ամեն մի սիստեմի սահմանափական մասում այդու հետագա աշխատանքների վրա և ուշացնում են նրա պտղաբերությունը:



Նկ. 8. Յերկրորդ տարվա ետք բաժանի սիստեմ պտղաբերությունը:

ԵՏԸ ԹՄԲԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԻ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ

Ետի գործողությունը թմբային սիստեմի այգիներում ավելի բարդ է և պահանջում է մեծ փորձառություն ու հմտություն, քան մյուս սիստեմների դեպքում: Թմբային

սիստեմի եյությունն այն է, վոր մեր հողային ու կլիմայական պայմանները և տեղական փոփոխակների փարթամաճեցողությունն ոգտագործելու համար, ամեն մի վազի վրա թողնված են մեծ քանակությամբ թերը, վորոնք անկանոն ձևով դուրս են գալիս վտակի տարրեր մասերից ու տարածվելով այս ու այն կողմ, կազմում են հսկայական սաղարթ: Այստեղ, ահա, ետվորը պետք է լավ մտածի, ուսումնասիրի վազը և նոր սկսի ետելու աշխատանքը

Ետի ընդհանուր կանոններն իմանալուց հետո, թըմբային սիստեմի այգիներում աշխատող ետվորը, հիմնականում, պետք է հեռացնի չորացած թերը և մատերը, վորքերքատու, հոռացած, հիվանդու և կարկտից ու այլ պատահարներից վնասվածները: Նա պետք է վազը մաքրի նրա մոտ գտնված բոլոր արմատաշվերից, վորոնք աճել են հախորդ տարում և սուզը չտալու կամ այն վատ կատարելու պատճառով մնացել են:

Ետվորն ավելորդ մատերը հեռացնելու ժամանակ աշքաթող չպետք է անի հաջորդ տարիների, համար պահեստի մատեր թողնելը, վորպեսզի հետագայում հնարավոր լինի թմբային կամ կարճացնել յերկարած թերն ու յենթաթերը:

Ամեն մի թերի կամ յենթաթերի վրա, նայած վազի տարիքին ու ուժին, կարելի յե թողնել յերկու-յերեք, յերեմն չորս մատ, վորոնք, սովորաբար, պետք ե ետել 4—5 աչքի վրա: Խոնավ և պարաբռ հողամասերում, ինչպես նաև մի շաբք ուժեղ աճեցողություն ունեցող փոփոխակները՝ հաշարաշ, ալախկի, ամբարի, շաֆեյի և այլն, պետք ե ետել մի քիչ ավելի յերկար, այն ե՝ 6—7 աչքի վրա:

Թերը վրա թողնվող յերկու կամ յերեք մատերից ներքեի մատը սովորաբար ավելի կարծ պետք ե ետել, քան մյուսները, հաջորդ տարվա համար ետք կանոնավոր կատարելու նպատակով:

Յերբեմն կուլակային հակակուլոնտեսական ազիտա-

ցիայի ազդեցության տակ վորոշ մենատնտեսներ իրենց այգիներն ետում են յերկար, այսպես կոչված «բերքի յեն ետում»։ այդ խիստ գոտանգավոր ե և անթույլատրելի, վորովհետև նա ուժասպառ ե անում այգին և հետագա մի քանի տարիներում գցում ե նրա բերքատվությունը։ Այդ յերեսույթի գեմ պետք ե խիստ պայքար մղել և տեղն ու տեղը պատասխանատվության կանչել հանցավորներին։

Հատուկ ուշադրություն պետք ե դարձնել վազերին կամոնավոր ձև տալու վրա. չպետք ե թույլ տալ վորպեսզի թերեք շատ յերկարեն ու հեռանան բնից, վորովհետև այդ գեպքում դժվարանում ե վազի մեջ կատարվող հյութաշարժությունը, վազն անորմալ ե աճում և տեղի յե ունենում բերքի քանակի ու վորակի անկում։

Արարատյան դաշտի այգիների խոշորագույն տոկոսը թմբային սիստեմի այգիներ են։ Այդ այգիները ճիշտ և վորակով ետելուց ե կախված մեր սոցիալիստական այգիների բերքի քանակը և վորակը։ Մեր այգիներից ստացված յեկամուտը ժողովրդական տնտեսության մեջ զգալի տեղ ե գրավում։ Այդ հանգամանքը խիստ պարտավորություն ե զնում մեր բոլոր կուտնտեսությունների, յուրաքանչյուր կոլտնտեսականի վրա, վորպեսզի նրանք իրենց վրա դրված ինդիքները՝ այգիների ետի ասպարիզում, կանուարին ճիշտ և աղնվորեն։

ԻՆՉՈՐԵՍ ԵՏԵԼ ԼԱՐԵՐԻ ՎՐԱ ԲԱՐՁՐԱՑԱԾ ԱՅԳԻՆԵՐԸ

Կարերի կամ հենակների (ցցերի) վրա բարձրացած այգիներում, հակառակ թմբային անկանոն սիստեմի, կիրառվում ե ձևավորման այս կամ այն կանոնավոր սիստեմը։ Այդ սիստեմները շատ-շատ են, վորոնցից կանգ առնենք յերկուսի վրա, վորոնք դոյլություն ունեն մեր խորհրդային տնտեսություններում։

Հովհար. — Հովհարի եյությունն այն ե, վոր նա ունի

բազմաթիվ թերեր, վորոնք բոլորը դասավորված են կանոննավոր կերպով միևնույն մակարդակի վրա և վոր միամյա մատերը և շվերը բարձրացվում են լարերի վրա։

Հովհարն ստացվում է հետեւյալ ձևով. նորատունկ այգին առաջին յերկու տարում ետում են կարծ—յերկու աչքի վրա՝ ամուր և պահանջված բարձրության բուն ստանալու համար (տես նորատունկ այգու ետը)։ Յերրորդ տարում սկսում են վազերի ձևավորման աշխատանքը։ Այդ գարնանը վազի վրա յեղած յերկու մատերն ետում են 2—3 աչքի վրա և 45—60° թեքությամբ մեկն ուղղում են աջ, իսկ մյուսը՝ ձախ և կապում լարից։ Այդ տարին նա կարող ե բերք տալ։

Հաջորդ տարին կազմակերպում են յերրորդ թեկվը՝ յեղած յերկու թեվերից նրա վրա, վորն ավելի ուժեղ ե. դրա համար յերկամյա մատի վրայի յերկու կամ յերեք մատերից ներքեվինն ետում են յերկու աչքի վրա՝ վորպես թևացու, իսկ վերեվի մատը՝ 2—3 աչքի վրա՝ վորպես բերքատու։ Նոր կազմակերպված յերրորդ թեկվը դարձյալ պետք ե թեքել, ուղղել առաջին յերկու թեվի հետ մեկ մակարդակի վրա և կապէլ լարից։ Այսպիսով ստանում են յերեք թեկվանի հովհար։

Ճիշտ նույն յեղանակով կարող ենք կազմակերպել չորրորդ, հինգերորդ և այլ թեվերն այնքան, վորքան թույլ ե տալիս վազի աճեցնելությունը։

Հովհարի ամենախոշոր առավելությունը, հատկապես Խ. Հայաստանի նպաստավոր հողային, կլիմայական և փարթամ աճեցնելության փոփոխակների առկայության պայմաններում, հենց այն ե, վոր նա հնարավորություն ե տալիս վազի վրա կազմակերպել բազմաքանակ թեեր, մի պայման, վոր չունեն ուրիշ շատ սիստեմներ։ Այդ տեսակետից Հովհարը մոտենում է մեր թմբային սիստեմին, վորի միակ առավելությունը բազմաքանակ թեեր ունենալն ե։ Այդ ե պատճառը, ահա, վոր Խ. Հայաստանի Հողմողկոմատն ըն-

դունել և հատուկ վարոշում, վորի համաձայն Հայաստանում բոլոր նոր այգիները պետք եւ ձևավորվեն գերազանցապես Հովհար սիստեմով:

Հովհարն իր տված բերքի քանակով և վորակով, ինչպես և վագերի նորմալ աճեցողությամբ յերբեք չի զիջում թմբային սիստեմին, այլ, ընդհակառակը, նրանից շատ բերք եւ տալիս. բացի այդ, նա հնարավորություն եւ ստեղծում մեքենայացման յենթարկել այգու աշխատանքները, մի հանգամանք, վորն ամենակարելորն եւ սոցիալիստական այգեգործության համար:

Հովհարը պահանջում եւ յերեք հարկ յերկաթալար: Առաջին հարկը պետք եւ լինի 30—40 սանտիմետր հողից բարձր: Առաջին հարկ լարից կապում են թևերը: Մատաղ շվերը կապում են յերկրորդ և յերրորդ հարկ լարերից, վորոնք առաջին հարկից գտնվում են՝ յերրորդ հարկը 40—50 սանտ., իսկ յերրորդը՝ 80—100 սմ բարձրության վրա:

Հովհարի սովորական ետք կատարվում եւ այսպես. ամեն թեի վրա թողնվում եւ մեկ բերքատու մատ, վորն ետվում եւ 3—4 աչքի վրա: Հաջորդ գարնանը յուրաքանչյուր թեի վրա յեղած 3—4 մատերից վերեխները հիմքից հեռացվում են, իսկ ներքեփ մեկը նորից ետում 3—4 աչքի վրա և կապում լարից: Այսպես կրկնվում եւ ամեն տարի:

Յեթե վագերի աճեցողությունն ուժեղ եւ, կարելի յետել ավելի յերկար, այն ե 5—6—7 աչքի վրա, բայց այս դեպքում պտղատու մատի հիմքի մոտ թողնվում եւ մեկ մատ՝ յերկու աչքի վրա ետված, վորը փոխարինող կամ ճկույթ ե կոչվում:

Յերենմա, յերբ թեր շատ և յերկարել, կարիք ե զգացվում այն կարճացնելու: Այդ գեպքերում թեի վրայի ընած աչքերից դուրս յեկած լավագույն շվերից մեկն ամառը սուզը տալու ժամանակ չեն հեռացնում, հատուկ խնամք են տանում նրա նկատմամբ և հաջորդ գարնանից սկսում

են նրանից թե կազմակերպել: Յերբ նոր թեր կազմակերպված ե, հինը հեռացնում են: Այդ ձեռվ են վարդում նուև մեր թմբային սիստեմի այգիներում:

Գյույլ.—Մեր նոր տնկված այգիների վորոշ մասը ձևավորված ե այս սիստեմով: Բավական ուսցիունալ սիստեմ ե, վորն առաջադրել եւ դոկտոր Գյույլն 1869-ական թվերին և բավականաշափ լայն բնողունելություն եւ գտել այգեգործական շատ յերկրներում: Խ. Միության այգեգործական վորոշ ընդաններում նույնակա կիրառվում ե այս սիստեմը:

Գյույլն լինում ե մեկ-թեամի և յերկթեամի:

Գյույլի սիստեմն ստանալու համար այգիներն առաջին յերկու տարում ետում են նույն ձեռվ, ինչպես ասել ենք նորատանկ այգու ետի և հովհարի առաջին յերեք տարվա ետի մասին: Ետում են յերկու աչքի վրա՝ բունը կազմակերպելու համար: Վորոնք առաջարկում են բունը կազմակերպելիս ետել մեկ աչքի վրա, բայց այդ վտանգավոր ե, վորունետև մեկ շիվը կարող ե կոտրվել և մենք մեկ տարի հետ կցցենք ձևավորումը:

Յերբորդ տարում յերկու մատերից վերեխները մատում են յերկար՝ 7—10 աչքի վրա, և նորիցնական դիրքով կապում առաջին հարկ լարից, իսկ ներքեփ մատն ետում են յերկու աչքի վրա և թողնում վորպես փոխարինող (տեսնկ. № 9): Հաջորդ տարին արդեն բերք տված մատը հիմքից հեռացնում են, իսկ փոխարինողից գուրս յեկած յերկու մատերից մեկը (առվորաբար մեշտ վերեխնը) նույն ձեռվ ետում են յերկար՝ 8—12 աչքի վրա և պառկեցնում լարի վրա, իսկ մյոււն ետում կարճ՝ 2 աչքի վրա, վորպես փոխարինող (տես նկ. 9): Այս բանը կրկնվում ե ամեն տարի:

Աչքերից դուրս յեկած շիվը կապվում են յերկրորդ և յերրորդ հարկ լարերից:

Շնորհիվ նրան, վոր մատաղ շվերն ուղղահայց դիրք ունեն, նրանը անարգել կերպով զարդանում են, ուստի



անհրաժեշտ ել լինում ամառվաս ընթացքում մեկ-յերկու
 անգամ շվերի ծայ-
 րերը հեռացնել:

Յերկթևանի Գյու-
 յոն ստացվում է
 նույն ձեռվ և նրա
 ետը կատարում են
 այն ձեռվ, ինչպես
 մեկ թևանի Գյու-
 յոյինը: Թե երից մեկն
 ուղղված է աջ, իսկ
 մյուսը ձախ կողմը
 իրենց փոխարինող-
 ներով: Յերկթևանի
 Գյույոն հնարավո-
 րություն և տալիս
 ավելի լավ կերպով
 ոգտագործել վաղի
 աճեցողությունը՝ հո-
 գուտ բերքատվու-
 թյանը:

Նկ. 8. Մեկ թևանի Գյույոն

ԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Ետի ժամանակը վորոշելը խիստ կարեոր է: Ետի ժա-
 մանակը սերտորեն կապված է տարվա յեղանակի, այդու-
 աշխարհազրական դիրքի, հողային պայմանների, և այլ
 հանգամանքների հետ: Հայտնի յէ, վոր շատ այգեգործա-
 կան յերկրներում, ինչպես և մեզ մոտ՝ Աղբքեջանի վորոշ
 շրջաններում, Նրիմում և այլն, վորտեղ ձմեռը տաք և և
 այգիները չեն թաղում, ետը կատարվում են աշնան տե-
 րևաթափից սկսած մինչև գարուն՝ բողբոջների բացվելը:

Մեր պայմաններում, յերբ ձմռան խիստ սառնամա-
 նիքների պատճառով ստիպված ենք այդիները թաղել, ետք
 կատարում ենք գարնանը:

Գարունը բացվելուն պես, յերբ ձյունը հալչում է,
 որերը տաքանում են և ալդու հողը, այսպես կոչված, քեշի-
 յե գալիս, պետք է անմիջապես բաց անել ծածկված այ-
 գիները, և փորոշ ժամանակից հետո սկսել ետելու աշխա-
 տանքը: Հարավ և հարավ-արևմտյան լանջերի վրա գտնվող
 այգիներում ետելու աշխատանքն ավելի շուստ պետք է
 սկսել քան մյուս տեղերում, վորովհետև այստեղ արեն
 ավելի ուժեղ և տաքացնում և աչքերն սկսում են շուստ
 բացվել: Ետի աշխատանքները պետք է սկսել և ավարտել
 այն հաշվով, վորպեսզի դեռևս բողբոջները բացված ըլինեն:
 Այդ մոտավորապես ընկնում և մարտի 2-րդ կեսերից մինչեւ
 ապրիլի 10—15-ը: Վաշ մի դեպքում չպետք է ուշացնել
 կամ ձգձել ետի աշխատանքները, վորովհետև յերբ աչ-
 քերն ուռչում են, այդ ժամանակ ամեն մի շարժում այդու-
 մեջ կարող է պատճառ դառնալ նրանց թափվելուն և մենք
 կունենանք բերքի հսկայական կորուստ:

Ետին զուգընթաց պետք է կազմակերպել արքադի-
 հավաքումը, վորը նույնպես չպետք է ուշացնել, մանա-
 վանդ, վոր միաժամանակ սկսվում է այգեփորը: Ընդհան-
 րապես աշխատանքները պետք է կազմակերպել մեկը մյու-
 սին զուգընթաց և այնպես, վոր միմյանց չխանդարեն:

ԱՇԽԱՑԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԵՏԻ ԺԱՄԱՆԱԿ

Ինչպես կոլտնտեսական բոլոր աշխատանքների ժա-
 մանակ, առավել ևս զարնան աշխատանքների լարված սե-
 ղոնում, աշխատանքի ճիշտ կազմակերպումից, ուժերի ճիշտ
 դասավորումից և ոգտագործումից և կախված ամբողջ գոր-
 ծը: Աշխատանքի կազմակերպման հիմնական ողակն ար-
 տադրական բիդադն է, վորտեղ բոլոր աշխատանքների
 դործարքային ճեի միջոցով հնարավոր և գառնում ապա-
 հովել տուաջադրված պլանների կատարումը:

Մի քանի տարի առաջ, վորոշ տեղեր այսոր եւ վորոշ մարզիկ դեմ են արտահայտված ետի գործարքային գարձնելուն, պատճառարաննելով վորակի անկումը Այսոր բոլորին պարզ եւ այդ տեսակետի հակակողանական-կուլահային բնություն ընդհալառակը, աշխատանքի գործարքին ձևը հնարավորություն եւ տալիս բարձր արտադրողականության՝ ետո միասին ապահովել նաև բարձրութակ ետը, վորովճեաւ աշխատանքն ինչպես կոլանտեսությունում, այնպես և խորհմանտեսությունում գնահատվում եւ քանակի և վորակի միասնությամբ Այսուեղ հակայական պատասխանառվություն եւ ընկեռում ըրիգադիրների, ազրուականների, վորակն ստուգող տեսչությունների և ընդհանրապես կոլտնտեսկան վողջ ակտիվի վրա Աշխատանքի ընթացքում պետք եւ սահմանել ուժիղ հսկողություն վորակի նկատմամբ և կատարվող սխաները պեղնուածքն ուղղել:

Ետոն այգու այնպիսի աշխատանքներից եւ, վորտեղ հեշտությամբ կարելի յեւ կիրառել անհատական գործարքը, և մեր կողմանտեսություններում պետք եւ վերջ տալ ետի ժամանակ ողակներով աշխատելու պրակտիկային:

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Կերպին տարիներում արտադրանքի նորմաների ճշշտման ուղղությամբ դդալի աշխատանքը եւ կատարվել, սակայն ներկա դրությունը բավարար համարել չեւ կարևոր, և մեր կողիկանիվ աւ խորհրդային տնտեսությունները գեռես հակայական անելիքներ ունեն Բոլորին պարզ եւ արտադրանքի ճիշտ նորմաներ ունենալու անհրաժեշտությունը. չեւ կարելի պատկերել սոցիալիստական տնտեսություն առանց դրան: Արտադրանքի ճիշտ նորմաների մշակումը մեր կոլտնտեսությունների կազմակերպչական ամրոցման հիմնական ողակներից մեկն եւ:

Դյուզամանտեսական աշխատանքների առանձնահատուկ ընույթը, վորոն արտահայտվում եւ աշխատանք-

ների կլիմայական ու հողային ոլարդաններից հախաժած լինելու և նրա սեղոնային բնություն հետ և այն, ավելի քան դժվարացնում եւ նորմաների վորոշումը:

Դժվար եւ վերջնական նորմաներ առաջարկել, վորոնք կիրառելի լինեն մեր բոլոր շրջանների կոլտնտեսություններում, անգամ միևնույն կոլտնտեսության տարրեր ըրիգագաններում ու այդիներում: Աւստի առաջարկը ամեն մի նորմա, ում կողմից եւ վոր նա առաջարկվի, պետք եւ լայն կերպով քննարկվի կոլտնտեսական բրիդադային ժողովներում, արտադրական խորհրդակցություններում և ձշտիվ ու հարմարեցվի տվյալ տնտեսության և ավյալ բրիգադի հողամասի պայմաններին: Ամեն մի նորմա պետք եւ ստուգվի արտադրության մեջ, աշխատանքի պրոցեսում և ուղղվի տեղանուածեղը:

Տվյալ դեպքում, յերբ խոսքը վերաբերում է այդու ետի նորմաները վորոշելուն, ապա պետք եւ իմանալ, վոր մեկ նեկտար այգու ետի վրա ծախսված բանվորական ուժի քանակը կախված եւ:

1. այգու հասակից. վորքան յերիտասարդ եւ արդին, այնքան ամելի քիչ բանվորական ուժ եւ պահանջվում նրա ետի համար.

2. այգու խտությունից. միևնույն պայմաններում վորքան խիտ եւ տնկված այգին, այնքան մեկ հեկտարի վրա վաղերի քանակը շատ եւ, հետեւաբար ավելի շատ աշխատանք եւ հարկավոր ետելու համար.

3. վագերի աճեցողությունից. վորքան հարուստ եւ այգու հողը սննդանյութերով, այնքան վագերն ուժիղ են աճում և տալիս են մեծ քանակությամբ շվեր ու մատեր, հետեւաբար ավելի շատ աշխատանք են պահանջում ետի ժամանակը քան այն դեպքում, յերբ այդին տնկված եւ աղքատ եւ չոր հողերում, վորտեղ վագերն ունեն թույլ աճեցողություն.

4. այգում մշակվող խաղողի փոփոխակից. յեթե այդին համատարած խարջի յեւ, հաշարաշ կամ մի ուրիշ փո-

փոխակը, վորն ունի ուժեղ աճեցողություն, պարզ ե վոր այստեղ ետի նորման պետք ե ավելի ցածր լինի, քան այն դեպքում, յերբ ունենք համատարած կախիթ կամ մի այլ՝ ավելի թույլ աճեցողություն ունեցող փոփխակ.

5. այսու ձևագրման սխտեմից, թմբային սխտեմի դեպքում, յերբ չկան ետի և ձևագրման վորոշ կանոններ, պարզ ե, վոր ետի նորման ավելի ցածր կլինի, համեմատած հովհարի, Գյույոյի կամ լարերի վրա բարձրացվող մի այլ սխտեմի հետ, յերբ կանոնավոր ետի շնորհիվ հսարաթիր և դառնում արտադրողականության դգալի բարձրացումը.

6. յեվ վերջապես, ետի նորման կախված ե նաև նախորդ վեգետացիոն տարուց. յեթե նախորդ տարում, վազի զարգացման լավ պայմանների շնորհիվ, այդիների աճեցողությունն յեղել ե լավ վիճակի մեջ, պարզ ե, վոր ետի աշխատանքը դժվարանում ե և ավելի բանուժ ե պահանջում, քան այն դեպքերում, յերբ, կիմայական ու վոռոգման աննպատ պայմանների շնորհիվ, այդ տարում վագերը վատ են աճել ու զարգացել:

Այս բոլորից պարզ ե դառնում, թե նորմաներ վորոշելը վորքան պատասխանառու գործ ե և վորքան մանրամասն ուսումնասիրություն ե պահանջում, թե ինչպես չի կարելի մի այդու նորման կիրառել մի ուրիշ այդում, կամ այս աարգա նորման կիրառել հաջորդ տարում:

Հայաստանի Այգե-գինեգործական Զոնալ Կայանն անցած տարում այգեգործական աշխատանքների արտադրանքի նորմաների ուսումնասիրության և նրանց ճշտման ուղղությամբ զգալի աշխատանքներ ե կատարել: Խրոնութարժային աշխատանքներ են տարվել Աշտարակի, Վաղպատի և Ղամարլիվ շրջաններում ու առաջին խորհանտեսությանների նորմաների կատարման ընթացքը: Այդ աշխատանքները գեռ լրիվ չեն, սակայն նախնական

առվաճներն ասում են, վոր մեր կողմանտեսությունները մոտավորապես ճիշտ են վորոշել ետի նորմաները: Այսպես, Վաղ-պատի և Աշտարակի շրջաններում մեկ հեկտար այգին ետելու վրա ծախսվում ե վոչ ավելի 10 մարդ-որից, իսկ առանձին ըրիգակներում՝ ավելի պակաս: Ղամարլիվ շրջանում սպիտակ խաղողի այգիների այգիներում մեկ հեկտար ետելու համար ծախսվում ե 9 մարդ-որից վոչ ավելի, իսկ սև խաղողի այգիների համար՝ 7 մարդ-որ:

Այդ նորմաներն այս տարի կը կին անգամ պետք ե քննվեն և ավելի ճշտվեն:

ԿԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ

Ետի պես կարեոր և պատասխանառու աշխատանքի համար, վորը պահանջում է մեծ զգուշություն, տարիների փորձ և հմտություն, անհրաժեշտ և հատուկ ուշադրություն դարձնել կազմերի պատրաստման գործի վրա: Բաղմաթիվ են անցած տարիների այն փաստերը, յերբ ետը հանձնարարվում եր ամեն մի պատահական մարդու, վորն յերբեք չի զբաղվել այդ գործով և չգիտե այն սկզբունքներն ու կանոնները, վոր անհրաժեշտ և կիրառել ետի ժամանակ: Շատերի հիշողության մեջ գեռ թարմ են այն «բուկսիրները», յերբ ետելու փոխարեն «խուզում ելին այգիները», վորի հետևանքները բոլորս ել զգացինք: Նման փաստերն այսոր արդեն տնհանդուրժելի յեն. ուստի մեր խորհանտեսություններն ու կոլտնաբեսությունները պետք ե լուրջ կերպով զբաղվեն ետի համար վարակյալ կազմեր պատրաստելու հարցով:

Զմեռվա ընթացքում անհրաժեշտ ե կազմակերպել հատուկ գասընթացնեղ, վորտեղ մասնագետների միջոցով պետք ե մեր յերիտասարդներին սովորեցնել ետելու գործը: Նրանց պետք ե կցել փորձված և հմուտ ետվորների, վորոնց զեկավարությամբ նրանք պետք ե աշխատեն ու սպարեն:

Պետք ե հասունի ուշադրություն դարձնել ետի աշխատանքներում կանանց ներդրավելու գործի վրա։ Յեթե կանանց դժվար ե ուրիշ ավելի ծանր աշխատանքներ հանձնարարելը, ապա ետելը հարավոր ե, միայն հարկավոր ե նրանց սովորեցնել այդ գործը։ Մեր պայմաններում, յերբ հին այգիներում, մեքենայացման բացակայության պատճառով, բոլոր աշխատանքները կատարում են ձեռքով, վորը հսկայական բանվորական ուժ ե պահանջում, ետի աշխատանքներում կանանց ներդրավելը դառնում է չափազանց կարևոր և այժմեական մի ինդիք, վորով պետք ե զբաղվեն մեր բոլոր կոլտնտեսությունները։ Այդ տեսակետից վողջունելի յեւ «Անաստված»-ի (Վաղարշապատ), Վոսկեվազի (Դղթամուր), Աշտարակի «Նահումյան»-ի և Ղամարլի շրջանի մի շարք կոլտնտեսությունների նախաձեռնությունը, վորոնք անցյալ տարի, առաջին անգամ, կանանց հանձնարարեցին ետի աշխատանքը։ Այդեղործական բոլոր կոլտնտեսությունները պետք ե հետևեն նրանց որինակին և այս տարի մեր այգիների զգալի մասը պետք ե ետքի կանանց աշխատանքի միջոցով։

Վորակյալ ետքորներ պատրաստելու միջոցով եւ, վոր մենք կվարողանանք՝ այդու այդ պատասխանատու աշխատանքը կատարել այսպես, ինչպես հարկն ե։

Սոցիալիստական այդեղործությունն ապահովենք համապատասխան աղբուժելինիկայով, յերկրին տանք քանակով շատ և բարձրորակ խաղող։



Քյուղներատի տպաքան, Յերեվան, Նալբանդյան № 50

ՀՀ Ազգային գրադարան



NL0291899

19641

ԳԻՒԸ 25 ԿՈՊ.



Ա. ՇԱՏՎՈՐՅԱՆ

Կակ պրօизվուտի օբրեզկւ վինոգրադնիկօն

Ածըս Զոնալնայ ստանցին:
Էրևան, I Սօվհօզ (բավշ. Սարդարսկի սալ).

Սէլխօզգիզ

1935

Էրևան